Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ

08.03.2026

Սիրելի՛ կանայք և աղջիկներ,
Սրտանց շնորհավորում եմ ձեզ գարնան ամենագեղեցիկ և խորհրդանշական տոներից մեկի՝ Մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ:
Այս օրը ևս մեկ առիթ է արժևորելու կնոջ անփոխարինելի դերը մեր կյանքում: Կինը կյանքի շարունակության խորհրդանիշն է, ընտանիքի ջերմության և հոգատարության աղբյուրը: Ձեր սիրով, համբերությամբ, իմաստությամբ ու նվիրումով ձևավորվում են ամուր ընտանիքներ, դաստիարակվում են արժանապատիվ սերունդներ և պահպանվում են մեր ազգային լավագույն ավանդույթները:
Հայ կնոջ կերպարը մշտապես եղել է ուժի, արժանապատվության և ստեղծարարության օրինակ: Այսօր ևս դուք ակտիվորեն ներգրավված եք հասարակական կյանքի տարբեր ոլորտներում՝ կրթության, առողջապահության, մշակույթի, տնտեսության և կառավարման մեջ՝ ձեր աշխատանքով ու նախաձեռնություններով նպաստելով մեր պետության զարգացմանն ու առաջընթացին:
Մաղթում եմ ձեզ ամուր առողջություն, անսահման երջանկություն, ընտանեկան բարօրություն և նոր հաջողություններ կյանքի բոլոր ոլորտներում: Թող ձեր յուրաքանչյուր օրը լցված լինի սիրով, գնահատանքով և գարնանային պայծառ տրամադրությամբ:
Շնորհավոր Մարտի 8: